



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.99

p-52

196

ՅՈՎԱԿԻՓ ԳԵՂԵՑԻԿ

ՅԵՐԻՍ ԱՐԱՐՈՒԱԾՍ

Թ. ԹԵՐԶԵՍՆ

—
ՏԵՏՐ Բ.
—

Ա.Ռ. ՀԵՂԻՆԱԿԻՆ

1872

| |
|--------|
| 891.99 |
| Թ-52 |

891.99

Թ-52

48

19 NOV 2011

ՅՈՎՍԷՓ ԳԵՂԵՑԻԿ

ՅԵՐԻՍ ԱՐՍՐՈՒՄՆՍ

Ք. ԹԵՐԶԵԱՆ

1001
1553



ԱՌ ՀԵՂԻՆԱԿԻՆ

1872

18 APR 2013
18 NOV 2011

31074

1222
1001

ԱՌ ՅԱՆՄԱՀ ՀԱՆՁԱՐ

ՊԼՇԻԿԹԱՇԼԵԱՆ ՄԿՐՏՉԻ

ՁՕՆ

ՉԱՐՄԱՆԱՅ ԵՒ ՅԱԻԷՐԺ ՍԻՐՈՅ

ԹՈՎԱՄԱ ԹԵՐԶԵԱՆ

Ներկայացուցման իրաւունքը Օրթագիւղի Բարեսեր
Ըսկերութեանն է:

ՅՈՎԱԵՓ ԳԵՂԵՑԻԿ

ՅԵՐԻՍ ԱՐԱՐՈՒԱԾՍ

Ա.Զ.Դ

Մեր անմահ Պէշիկթաշեանէն՝ ասկէ քանի մը տարի առաջ Օրթադիզի Բարեսէր ընկերութիւնը նոր խաղ մը խնդրած էր: Բայց ինքը արդէն ըմբռնեալ ըլլալով այն անողոք արտաքին որ զինքը գերեզման տարաւ՝ ինծի յանձնեց որ Յովսէփ Գեղեցիկն սրտառուջ վէպը նմանողութեամբ գաղղերէնին՝ Թաարոնի բեմը հանեմ: Որով մտքէն կ'անցնէր բնաւ թէ Ազգը այսչափ շուտ պիտի կորսնցնէր զինքն, ու որդեկորոյս Յակոբայ նման իր նորանոր ցաւոց մէջ զինքը պիտի կոչէր 'ի զուրո՛ւ...

Բարեկամ ձեռք մը արտասուախառն հիացմամբ՝ իր շէր մին վերայ կը դնէ այս նուէրը. որ որչափ ալ ըստ ինքեան չնչն ըլլայ՝ իր յիշատակաւը նուիրական եղած է:

ԹՈՎՄԱՍ ԹԵՐԶԵԱՆ

ՅԱԿՈՒՐ
ՅՈՎԱԵՓ
ՍԻՄՈՆ
ՌՈՒՐԵՆ
ՆԵՓՅԱՂԻՍ
ԲԵՆԻԱՄԻՆ
ՈՐԳՈՐԱՎ
ՄԻՍ ՈՐԳՐԻՔ ՅԱԿՈՎԱՅՑ
ԹԻՖԼԻՍԱԿԱՏՔ
ԵԳԻՍՊԱՅԵԼԵ
ԳԵՐԵԼԵ

Նահապետ
Որդի՝ Յաւրայ
Հասարակ Յովսէփ

Տեսարանն է 'ի Մեմփիս:

ԱՐԱՐՈՒԱԾ Ա.

Տեսարանն է յԱպարանս Յովսէփու:

ՏԵՍԻՎ Ա.

ՅՈՎԱԵՓ (առանձին)

Ի զուր շորհապարան Փարաւոն իղձերս լրացնել կը փութայ. այսչափ սատուոյ և փառաց մէջ դառնակակիծ յիշատակներ հոգիս կը յուզեն: Դաւարագեղ հովիտք Գեբրոնի, հայրենի դաշտեր. նման անապատաց հողմէն թուամածաղկի մը իմ նշդէն մանկութիւնս ձեզմէ հեռու կը նուաղի: Ո՛վ հայր իմ Յակոբ, դու երբեմն սիրով զմայլեալ գոռանոք

զիս քու ծերութեանդ յոյսն ու նեցուկը կը կոչէիր. և հիմա իմ աղէտիցս վերայ արտասուելով՝ դերեզմանին գուռը կը հասնիս... Ո՛վ անագորոյն նախանձոտ եղբարք, ձեր յանցաւոր ձեռքերը հօր մը գրկերէն զիս յափշտակեցին: Միթէ անտարբէր աջօք տեսաք իր ծնեւագուծ սրտին ցաւերը. զձեզ ասելու էի, ապերախօք. սակայն այսպիսի թշուառութեան մը մէջ ալ կ'իմանամ որ սիրաս'ի գուծ պիտի շարժի, եթէ ձեր աչաց վրայ զըջման արցունք մը նշմարեմ:

ՏԵՍԻՒ Բ

ՅՈՎՍԵՓ, ՈՒԴՈՒՅԱԼ

ՈՒԴՈՒՅԱԼ. Ինչո՞ւ մշտ այսպէս արտում ես, Տէր. թէ որ թշուառ է մեծն Կէոփաս, ո՞վ ուրեմն կրնայ երջանկութիւն յերազէլ. իշխանդ Փարաւոնի՛ գու հաղորդ ես իր ջօրութեանը, քու իմաստուն կանխատեսութիւնդ փրկեց զՆիպոտոս սովէն: Աւագանին կը պատկառի քեզմէ. թագաւորը զքեզ կը սիրէ. ժողովուրդը կը պաշտէ, արքայից միայն արուած պատիւները կը պատրաստուի քեզի. և վաղը յալթական կառացդ բարձրէն պիտի տեսնես այն մարդիկը զոր երջանկացուցիր:

ՅՈՎՍԵՓ. Այո՛, իմ խնամօքս Նիպոտացիք առատութիւն կը վայելեն. բայց սիրեցեալդ իմ Ուրբաւ մի թէ ուրիշ աստեղց տակ թշուառներ չկան:

ՈՒԴՈՒՅԱԼ. Եւ ո՞վ քեզի տուաւ, Տէր, տիեզերաց փրկութեանը հակելու հողը:

ՅՈՎՍԵՓ. Դու իմ ճակատագիրս չես գիտեր կամ չցատնալ կը կեղծես:

ՈՒԴՈՒՅԱԼ. Այս միայն գիտեմ, որ Նեղոսի փայնց անծանօթ Աստուծմէ մը լուսաւորեալ լինը տարի կայ՝ գուշակեցիր Փարաւոնի, իր ժողովրդոցը սահմանեալ ճակատագիրը: Այնչափ մեծ երեցաւ իրեն քու իմաստութիւնդ որ իր մասանին քեզ տալով՝ Կէոփաս կոչեց զքեզ, և իր տէրութեան հողը քեզի յանձնեց:

ՅՈՎՍԵՓ. Ձե՛ս գիտեր ուրեմն որ Հրէից մէջ ծնած՝ հոս բերուեցայ, մուցուած գերիներու խմբին մէջ. կնկան մը ա-

տելն նենգութեանը զո՛հ եղած՝ երկայն ատեն տառապեցայ սոսկալի բանտի մը մէջ, ուսկից ելլալով այս պատիւներուս հասայ:

ՈՒԴՈՒՅԱԼ. Ձէի գիտեր բնաւ, Տէր:

ՅՈՎՍԵՓ. Սորով ուրեմն իմ թշուառութիւններս այս երկրիս մէջ համբաւաւոր չեկրնար կոչուել այն արիւնք՝ ուստի ծնայ. քանզի որդի եմ ես հովուաց՝ որոնց բազմութիւն հօտերը՝ Յորդանանու ափանցը վրայ կ'արածին. Յակոբ է իմ հօրս անունը: Այո՛ Սքրահամու թուրը՝ հաւուէն նման առաքինութեամբք երկնից հաճոյ եղաւ, և Աստուած անոր հետ դաշինք և ուխտ հաստատեց: Տասուերկու եղբայր էինք, և ես իր սիրեցեալ Հաբեւայ երկու որդուցը անդրանիկն եմ: Խանդաղատանօք կը սիրէր զիս Յակոբ. այս գորովը եղբարցս նախանձը գրգռեց, ատելի եղայ անոնց աջքին: — Դեռ մանկական հասակիս մէջ, վստահութեամբ իմ չարասիրտ եղբարցս հետ էլայ՝ Սիւքեմայ պարարտ արօտավայրը, մեր խաչնիքը արածերու համար: Այն գողօր հասակին պարզ մտութիւնն ունէի և գառնուկներուս նման երկչոտ էի: Երբք մենաւոր արմաւենեաց քով աղօթքս կը մատուցանէի, երբ՝ ո՞վ սոսկալ յիշատակ, եղբարքս զիս բռնելով՝ ցուրտ և միթին վէի մը մէջ մոռեգնաբար գահավիժեցին: Իսկ ես անոնց կատաղութեանը դէմ դնելու համար՝ անմեղութիւնս միայն և արցունքներս ունէի: Մահուան մօտ էի, երբ զիս իրբև դերի արաբացի վաճառականաց ծախեցին: Մինչդեռ անոնք իրենց եղբօրը արեան գինը մշկերնին կը բաժնէին, աւանդ, ես կուլայի իմ հօրս և այն ապերախտներուն համար որ կը ծախէին զիս:

ՈՒԴՈՒՅԱԼ. Ե՛հ, ի՛նչ. Տէր, յորմէ հետէ Փարաւոնի սիրելին ես և քու աջօ փեղերաց վրայ կը տարածի, այսպիսի նենգութեան մը վրէժը չի լուծեցիր:

ՅՈՎՍԵՓ. Եղբարքս են, Ուրբաւ:

ՈՒԴՈՒՅԱԼ. Քու Աստուածդ անշուշտ պատուհասեց զանոնք: Այս տիեզերական սովը...

ՅՈՎՍԵՓ. Ո՛վ անգութ. կը կարծես դուռն որ անոնք հօրս քոնք ըլլան, ո՞չ միայն անոնց աղէտքներն չաւելցուցի, այլ նաև ջանացի մեղմացնել, գաղանի՛ պաշտօնեայքս Քանանու մէջ առատութիւնը սփռեցին: Բայց քանի մը ժամանակէ՛ ի

վեր, սիրեցէալդ Ուղորալ, յորմէ հետէ բարեգործութեանցս
և պատուոյս նախանձարիւս թշնամիւ կ'արդէլուն զՓարաւոն
ամեն թշուառները իբրև հպատակ խնամէլէ, յորմէ հետէ
արդիւնց ինքն օտարականաց օգնել, իմ ընտանիքս սովալըուկ
կը տանջի: Հայրս իսկ թերևս կարօս է հացի.. աւանդ, այս
դառն յիշատակը աչքէս արցունքներ կը հոսեցնէ:

ՈՒԳՈՒՅԱԼ. Հանգարաւէ, Տէր...

ՅՈՎՍԵՓ. Արտէջի բարեկամ: Ե՛լ գնա անյապաղ Քեր.
րոնի ձորը, աես, աւանդ, կ'ապրի՞ դեռ արդեօք իմ հայրս.
ըսես իրեն որ հոս գայ ընտանեօք և իր բոլոր աղետովը: Թէ որ
բովանդակ ժողովորդեան մը ճակատագիրը՝ զիս աստեղ չ'ստի.
պէր կենալ, ո՛հ անշուշա կը վազէի՛ իր ոտքը կ'իյնայի. բայց
ահա հասաւ այն ժամը, յորում ամբոխը հրապարակին մէջ
խոնելով՝ անհամբեր կը սպասէ ընդունել այն նպաստները.
զոր կանխատես ոգւով իրեն պատրաստեցի: Հոս կեցիր դուն
Ուղորալ, ժողովէ գերիներդ և ուղտերդ, և միաբոյ բեր որ քեզ.
մէ կը կախուի կենացս երջանկութիւնը:

ՏԵՍԻՒ Գ

ՈՒԳՈՒՅԱԼ (առանձին)

Ինչպիսի՞ առաքինութիւն, և ի՞նչ մարդ. այո՛, Աս-
տուած մըն է որ իրեն կը ներշնչէ. յորմէ հետէ կը կառավարէ
զԵգիպոսս, անմեղութիւն, հաւասարութիւն և արդարու-
թիւն կը տիրեն հոն: Այլ փութանք իր պատուէրները
կատարել:

ՏԵՍԻՒ Դ

ՆՈՅՆ ԵՒ ՍՊԱՅ ՈՄՆ

ՍՊԱՅ. Տէր, մէկ քանի օտարականք խօսիլ կ'ուզեն Կէո-
փասայ հետ, ՚ի զուրկ'արգելում անոնց այս պալատիս մուտ-
քը. ես քաշուել չեն ուզէր:

ՈՒԳՈՒՅԱԼ. Ի՞նչ կը խնդրեն ուրեմն այդ յանդուգն մար-
դիկ:

ՍՊԱՅ. Չեմ դիտեր. շատ թշուառ կ'երևնան, հագուստ-
նին կը յայտնէ իրենց աղքատութիւնը, իմ խստութիւնս
անոնց ողբեր ու արցունքներ թափել կու տայ:

ՈՒԳՈՒՅԱԼ. Եւ ո՞րն է իրենց հայրենիքը:

ՍՊԱՅ. Հրեայք են Քանանու երկրէն եկած:

ՈՒԳՈՒՅԱԼ. Քանանէն.. փութամ կոչէ զանոնք այս սրահը,
և մեծարանօք վարուէ հետերնին: (Սպան Վէլէ. առանձին)
Ի՞նչ կը լսեմ. փութանք Կէոփասայ աւետել այս լուրը. իր
տագնապները պիտի դադրին հօրը ճակատագիրն իմանալով-
(Վէրնայ):

ՏԵՍԻՒ Ե

ՍՊԱՅՆ ԵՒ ՕՏԱՐԱՎՈՆԻՔ

ՍՊԱՅՆ. (Այս օգարակն) Սիրտ առէք, օտարականք, մեծն
Կէոփաս կը հաւանի զձեզ տեսնել և ըսել ձեզի, անյապաղ
կու գայ ինքն հոս. (Վէրնայ):

ՏԵՍԻՒ Զ

ՈՐԳՈՒՔ ՅԱՎՈՎՅՈՒՐ

ՌՈՒԻԲԵՆ. Այո՛, էղբարք, մեր հարց Սատուծոյն վասա-
հինք: Եգիպտոսին բարերարը մեծն Կէոփաս անշուշտ բնա-
կարան մը մեզի շնորհէ այս երկրիս մէջ՝ որ թէ և ամու՛՛լ այլ
կրնայ զմեզ երջանկացնել:

ՆԵՓԹԱՂԻՄ. Այո՛. Աստուած մեր հարցն ըսաւ, երբոր
ուխտին վէմը կ'օծէր. «Յակոբ, Եգիպտոսի մէջ ցաւոցդ վեր-
ջը պիտի դանես»:

ՍԻՄՈՆ. Իսկ ես Եգիպտոսի մէջ է որ խզճի ամենէն սու-
կալի խայթերը կը զգամ:

ՌՈՒԻԲԵՆ. Եւ ինչո՞ւ հոս աւելի թշուառ ես:

ՍԻՄՈՆ. (Յաճ առ էղբարն) Միթէ հոս չէ՞ Յովսէփ...

ՆԵՓԹԱՂԻՄ. Ինչո՞ւ կը խորհիս միշտ թշուառ Յովսէփոյ
վերայ. Աստուած ներեց մեզի անշուշտ, որովհետեւ այս
ասպնջական երկրիս մէջ զմեզ կ'առաջնորդէ:

ՍԻՄՈՆ. Ո՛չ. Աստուած իր պահապան ձեռքը վերցուց
Յակովբայ յանցաւոր որդւոց վրայէն:

ՆԵՓՔԱՂԻՄ. Ձեռ տեսներ իր բարուձիւնները, Քանանու
սովէն զմեզ կը փրկէ:

ՍԻՄՈՆ. Ե՛ս եմ, դուք էք այն անիծից պատճառը որ
զաշխարհ պատուհասակոծ կ'ընեն:

ՌՈՒԲԵՆ. Եւ ի՞նչ մեծ յանցանք ըրինք մեք:

ՍԻՄՈՆ. Դ՞ու կը հարցընես զայն Ռուբէն, և Սիմոնի՞ն
կը հարցընես:

ՆԵՓՔԱՂԻՄ. Ի՞նչ ուրեմն.. յանցանք մը միայն պիտի
թունաւորէ՞ մեր կեանքը:

ՍԻՄՈՆ. Յանցանք մը կը կոչես անմեղուձիւնն ու ման-
կուձիւնը մատնել ուժին և բաղմուձեան. ո՛հ, եթէ սխալ
մունք մըն է միայն այս, իմ սրտիս վերայ ոճրագործութեան
մը պէս կը ծանրանայ, և կենացս իւրաքանչիւր վայրկեանը կը
թունաւորէ:

ՌՈՒԲԵՆ. Յանուն ամենողորմ Աստուծոյն, հանդարտէ
Սիմէոնը:

ՆԵՓՔԱՂԻՄ. Յանուն մեր հօրն ալեացը, որ զամենքս ալ
պիտի անիծէր:

ՍԻՄՈՆ. Եթէ կը վախնաք սրտիս տագնապները տեսնել,
ինչո՞ւ այնպիտի երկիր մը բերիք, որ մտացս մէջ եղեւանս յի-
շատակը կը զարթուցանէ. ինչո՞ւ Սիւքեմայ հովիտները զիս
չի՛ձգեցիք, ինչո՞ւ չթողուցիք որ սովին ու յուսահատութեան
ճարակ ըլլամ:

ՌՈՒԲԵՆ. Ապերախտ, վրագ ունեցած բարեկամութիւն
նիս յանցանք մը կը համարիս:

ՍԻՄՈՆ. Ձեր բարեկամութիւնը.. այն վայրկեանին պէտք
էիք յայտնել զայն ինձի՛ երբ նենգաւոր խրատներով առա-
քինւոյն Յովսեփայ գէմ կը գրգռէի ձեր ատելութիւնը:

ՆԵՓՔԱՂԻՄ. Տեսա՞ր որ լացի ես իր ճակատագրին վրայ,
և նաև ներէ՞ ինձ, անիծեցի զքեզ՝ Սիմէոնը:

ՍԻՄՈՆ. Եւ ի՞նչ կը զօրէր քու անէձքդ. Ամենակալը զիս
արդէն դատապարտեր էր: Ձիտ անիծելու տեղ վերաւորելու
էիք այն դանակով որով զՅովսեփ կ'ուզէի խողտողել:

ՆԵՓՔԱՂԻՄ. Եղբայրս չե՛ր...

ՍԻՄՈՆ. Յովսեփն ալ իմ եղբայրս չէր:

ՌՈՒԲԵՆ. Ո՛րչափ կը կարեկցինք քեզ:

ՍԻՄՈՆ. Ո՛չ, ո՛չ. Յաւիտենականը՝ զոր զայրացուցի, իմ
եղեւաննցս ծանրութեանը տակ զիս կը ճնշէ. իր վրէժխնդիր
աստուածային մատը իմ ճակատիս վրայ այսպէս զրոշմեց.
« Հեռացէք, մահկանացուք, թշուառէ մը որ ալ ո՛չ բարե-
կամ ունի և ոչ սղոթական, անմխիթար հօր մը ձեռքէն ամե-
նէն խանդակաթ որդին յափշտակեց »:

ՌՈՒԲԵՆ. Ո՛վ տարբարդ եղբայր, կը բաւէ կսկիծդ:

ՍԻՄՈՆ. Երբ տագնապներս ամբքելու համար որդւոցս
գիրկը կը գիմեմ, իրենց գողարիկ դրկացը մէջն ալ աստուա-
ծային ահեղ վրէժխնդրութիւնը զիս կը հալածէ. անոնց ան-
մեղ ժողիւր ստկումս կ'աւելցնէ... անոնց մանկական կեր-
պարանքին վրայ կը կարծեմ նշմարել որ ինձի նման ապե-
րախտ պիտի ըլլան:

ՌՈՒԲԵՆ. Մխիթարուէ, թշուառ:

ՆԵՓՔԱՂԻՄ. Ո՛հ, քու հայրդ ալ մտածէ:

ՍԻՄՈՆ. Աստուծոյ վրէժխնդիր բազուկը վրաս կը ծան-
րանայ (Ձայն խփխփ):

ՌՈՒԲԵՆ. Լուռութիւն.. ահա իշխանը իր թիկնապահնե-
րովը կու գայ:

ՍԻՄՈՆ. Ի՞նչպէս լռեմ, երբ երկնից ցատումն ինձ կը
սպառնայ:

ՏԵՍԻՒ Է

ՍՊԱՅՆ ԵՒ ՆՈՅՆՔ

ՍՊԱՅՆ. Օտարականը, ահա Կլէոփաս, յիշեցէք որ ինքը
թագաւորին պատկերն ու նեցուկն է, և արժանի մեծարանքն
իրեն մատուցէք, երկիրպագէք իր զօրութեանը...

ՏԵՍԻՒ Ը

ՅՈՎՄԷՓ, ՌԻԴՈՓԱԼ ԵՒ ՆՈՅՆՔ

ՌԻԴՈՓԱԼ. (Գառայ առ Յիւլէէ) Ահա, Տէր, այն օտարա-
կանը որ Եբրայեցի կը կոչեն ինքզինքնին:

ՅՈՎՍԵՓ. Սիրտս կ'այլալի ասանց առջև. ո՛հ եթէ մէջեր. նին եղբայրներէս մէկ քանին ըլլոր:

ՌՈՒԲԵՆ. Տէր, ծունկերդ կը գրկենք. (էւ Լո՛ւի):

ՅՈՎՍԵՓ. Ոտք ելէք, օտարականք. (առ Ուրբալ): Ի՞նչ կը տեսնեմ Ուրբալ, ասանք եղբարքս են:

ՌՈՒԲԵՆ. Կարելի է:

ՌՈՒԲԵՆ. Տառապեալք օմանք յանուն ժողովրդեան մը կու գանք զԹուօթիւնդ խնդրել:

ՅՈՎՍԵՓ. (առ Ուր.) Ահա Ռուբէն եղբարցս անդրանիկը:

ՆԵՓՓԱՂԻՄ. Աննան հովուի մը որդիք ենք Թափուր երկրիս ճօխութենէն: Ահա ոտքիդ առջև կը գնենք ամենէն Թանկագին ստացուածքնիս. պիտի արհամարհես, պիտի մերժես, ո՛վ Տէր, այն խոսնիերը զոր Յաւիտենականին կը մատուցանենք մեր օտնից մէջ:

ՅՈՎՍԵՓ. (առ Ուր.) Նեփթաղիմայ ձայնն է, ինքը միայն իմ Թշուառ ճակատագրիս վրայ արցունք Թափեց:

ՌՈՒԲԵՆ. (առ Յով.) Այլալուծիւնդ մի յայտնէր:

ՌՈՒԲԵՆ. Բարերար իշխան, որուն կանխատեսութիւնը փրկեց ՂՅդիպտոս. ներելի է արդեօք մեզ, քու աջոյդ հովանւոյն տակ ապաւենիլ: Աւա՛ղ. Քեբրոնի երկիրը, Դովթայի մոյ գաշտերը, Սիւբեմայ հովիտք որ երբեմն արգաւանդ էին և ճոխ, հիմայ ամուլ գարձան. . . Սովամահ կը նուաղին օրբստ օրէ Աստուծոյ որդիքը. . . Իսրայէլ Թողուլ կը ստիպուի իր հայրենիքը, և այն սեղանը զոր Յաւիտենականին փառացը կանգնեց. . .

ՅՈՎՍԵՓ. (Բէլուսի) Ո՛վ Թշուառ երկիր. (Բաբել) Եւ ի՛նչ միթէ բոլոր ձեր ժողովուրդը Եդիպտոս գաղթեց, և սրնու անուամբ Փարաւոնի պաշտպանութիւնը կը խնդրէք:

ՌՈՒԲԵՆ. Յանուն Թշուառութեան: — Ո՛հ, մի մերժեր Յակոբայ որդիքը:

ՅՈՎՍԵՓ. Յակոբ է ուրեմն հօրդ անունը:

ՌՈՒԲԵՆ. Այո՛, Տէր: Այս պատկառելի ծերունին քեզի պէս ամենուն սիրելի, Թշուառները կը խնամէ, զԱստուած կ'օրհնէ, որդիքը կը սիրէ և մարդկանց երջանկութեանը կ'աշխատի:

ՅՈՎՍԵՓ. (Բէլուսի) Ո՛վ Հայր իմ:

ՆԵՓՓԱՂԻՄ. Աստուած հաճեցաւ իւր որդւոցը պահել զինքը:

ՅՈՎՍԵՓ. (Բէլուսի) Փա՛ռք քեզ Աստուած իմ:

ՆԵՓՓԱՂԻՄ. Իր վրայ ծանրացան տարիները, առանց իր հոգւոյն կորովը նուաղեցնելու: Իր զգայարանները միայն տկարացուցին: Աւա՛ղ. ո՛վ իր որդիքը չիկրնար տեսնել:

ՅՈՎՍԵՓ. Եւ ի՛նչպէս կրցաք Թողուլ անօգնական ձեր հայրը Թշուառ երկրի մը մէջ:

ՌՈՒԲԵՆ. Տէր, հետերնիս է Յակոբ. Աստուծոյ կամքն այս էր:

ՅՈՎՍԵՓ. Ինչո՞ւ հոս չէ. միմեկ ձգեցիք արդեօք զինքը: ՌՈՒԲԵՆ. Մեր կրասեր եղբայրը Բենիամին՝ իր քովէն բնաւ չիհեռանար:

ՅՈՎՍԵՓ. (առ Ուր.) Բենիամին. ո՛վ անուշ յիշատակ. . . ծայրայեղ երջանկութեանս չեմ կրնար գիմանալ. (Բաբել) Պիտի տեսնեմ ձեր հայրը:

ՌՈՒԲԵՆ. Մեր բազմութիւ ծառայից, մեր կանանց ու որդւոց հետ զեռ անապատէն կ'անցնի: Քու պաշտպանութիւնդ խնդրելու համար բոլոր մեր ընտանեաց վերայ, հարկ համարեցանք մե՛ք առաջ գալ:

ՅՈՎՍԵՓ. Դնորհեցի ձեզ զայդ՝ որդիք Յակոբայ, այո՛, հոս պիտի կարենաք պատասպարիլ:

ՌՈՒԲԵՆ. Կը ներէք ուրեմն մեզի, Տէր, վրաննիս կանգնել այն գաշտավայրին մէջ, ուսկից կը նմարուի մեծակառուցն Սեմիին:

ՅՈՎՍԵՓ. Ես ձեր պիտոյքը կը հոգամ, օտարականք. պիտի տեսնաք թէ՛ սրջափ մեծարոյ է աչացս Թշուառութիւնն ու ծերութիւնը:

ՌՈՒԲԵՆ. Ո՛հ, սրջափ երախտապարտ եմք. . . (Էրբաբելի ծանր անխնայ):

ՅՈՎՍԵՓ. Ոտք ելէք իմ եղբ. . . (Բէլուսի) Ո՛ւրբալ, ո՛հ ինչ վայրկեան. . . սիրտս կը արօխէ. . . իմ եղբ. . . (Բաբել) Օտարականք, ոտք ելէք. . . բայց ըսէք ինձի, Յակոբայ բոլոր որդիքը առջևս են. . . ձեր հայրը չի՞ ըր մէկուն կորստեանը վերայ:

ՆԵՓՓԱՂԻՄ. Ներէ, ո՛վ Տէր, մահը յափշտակեց մեր Յովսէփ եղբայրը:

ՍԻՄՈՆ. (այլալուծ) Յովսէփ. . . ո՛վ է այն որ իր վրայ կը խօսի:

ՅՈՎՍԵՓ. (Ախարի) Սիմէոնն է, ահամայ սարուռ մը
կը դգամ:

ՍԻՄՈՆ. Ո՛չ, սո՛ւ մահը չի յափշտակեց զնքը, կ'ապրի
յուսամ, մի միայն սփոփանքս այս է:

ՈՒԿՈՐԱՆ. Ի՛նչպէս կ'այլադուռնիս, Տէր իմ:

ՅՈՎՍԵՓ. Կը սարուռիմ զնքը տեսնելով:

ՆԵՓՔԱՂԻՄ. (առ Սիմ.) Ո՛չ, տաղնապայոյզ սիրտդ հան-
գարակ:

ՈՒԿՈՐԱՆ. Ո՞վ վերցուց քեզի դէմ դաշտնը:

ՅՈՎՍԵՓ. Իր դէմքը յայտնելու էր քեզի զայն. ահա Սի-
մէոնը, ահա տփփոյն է իր ճակատը, մասնիչի մը կերպարանք
ունի, յուսահատութիւնն իր ազնիւ կը կրծէ:

ՍԻՄՈՆ. Խիղճը զիս կը խայթէ, ինքզինքս սանձել չեմ
կրնար:

ՅՈՎՍԵՓ. Գացէք ամենքդ ալ ձեր հօրը առջև և ըսէք
իրեն թէ Կէտփաս այս աստեղց տակ ապաւեն մը կը շնորհէ
իր ժողովրդոցը:

ՈՒԿՈՐԱՆ. Ի՛նչ ցնծութիւն. սվ երջանիկ բաղդ. մա-
հուան ճիրաններէն դու զմեզ կը ճողոպրես:

ՈՒԿՈՐԱՆ. Տէր, խուռն բաղմութիւնը երախտագիտու-
թեան երգերով կը թնդացնէս պաշտօնի բակը:

ՊԱՐ. (Արարի) Փառք բարերարին մարդկան, պատիւ
ազատարարին աշխարհիս:

ՅՈՎՍԵՓ. (առ Ուր.) Օգնէ ինձ Ուրոբալ, թող հայրս
երջանկութեան օրեր տեսնէ նորէն:

ՆԵՓՔԱՂԻՄ. Աստուած մեր օգնականն է. Կէտփաս մեր
Թշուառութիւնը երջանկութեան կը փոխէ:

ՊԱՐ. (Դարակն) Փառք բարերարին, և այլն:

ԶԳԻ ՎԱՐԱԳՈՅՐՆ

ՄԱՐՍՐՈՒԱԾ Բ

Փիշեր. — Մեմփիս կը տեսնուի, վրաններ կան ու
րոնց առջինը գոց ու շքեղ է:

ՏԵՍԻՒ Ա

ՈՒԿՈՐԱՆ, ՅՈՎՍԵՓ

ՅՈՎՍԵՓ. Ուրոբալ, պատրաստ կենան թիկնապահքս
այս տեղս, Մեմփիսի բնակիչք զգան՝ Հրէից պաշտամունքը
խուովել:

ՈՒԿՈՐԱՆ. Հրամաններդ կը կատարուին, Տէր. բայց
պէտք է որ առանձին ձգեմ զքեզ այս օտարականաց մէջ:

ՅՈՎՍԵՓ. Ինձի համար օտար չեմ..

ՈՒԿՈՐԱՆ. Մի գուցէ մուրթս, Տէր, այս մթութեան
մէջ, այս խառնաշփոթ վրանները..

ՅՈՎՍԵՓ. Թ'սղ սիրտս առաջնորդէ ինձի դէպ 'ի հօրս
վրանը:

ՈՒԿՈՐԱՆ. Բու վրանդ է, Տէր. — Յախոբայ մոքէն ան-
գամ չանցնիր թէ այն ճոխ բարձերուն վերայ կը հանգչի ու
րոնց վերայ կը կրթնի իր որդին հանդիսից մէջ:

ՅՈՎՍԵՓ. Ի՛նչ հոգն է անոր արբայից շուքը, իր Աս-
տուծոյն փառքը միայն կը տեսնէ, իր որդուցը երջանկու-
թիւնը: — Սիրտս կը արօփէ. խնդութիւն. զնքը տեսնել..

ՈՒԿՈՐԱՆ. Մի յայտներ այլայլութիւնդ, սվ Տէր, տա-
րապայման խնդութիւնը փնասակար հեռանքներ կրնայ ու-
նենալ հասակէն տկարացեալ հօրդ վերայ: — Սպասէ գոնէ..

ՅՈՎՍԵՓ. Ի՛նչպէս զսպեմ սրտիս բոցեռանդն տեսնանքը.
բայց դու՛ աղէ, դարձիր 'ի Մեմփիս..

ՈՒԿՈՐԱՆ. Չիմոռնաս Տէր, որ արեւ ծագելուն պէս յաղ-
թանակը քեզի կը սպասէ: Ամեն բան արդէն կաղմ և պատ-
րաստ է, ժողովուրդը՝ իր բարերարին դէմքը անհամբեր տես-
նարու..

ՅՈՎՍԵՓ. Ո՛րչափ տաղտուկ են ինձ այսօր այս պատիւ-
ները.. հաճոյք մը միայն կրնայ հիմայ զգալ հոգիս, այն է

Իսրայելի գիրկը գիմեւ. Բայց սուզ է ժամանակը, երթ և արևուն առջի ճառագայթներուն հետ վերագարձիր (Քեյի Ուրբալ):

ՏԵՍԻԼ Բ

ՅՈՎՍԷՓ (առանձին)

Պիտի տեսնեմ ուրեմն այն սրահառելի ծերունին որ իմ ամենէն գողոր հասակէս զիս այնչափ կը սիրէր. Ո՛վ Յակոբ, սիրեցեալ որդւոյդ ծոցը պիտի հանդէմ աւելարդ գլուխդ. Ի՛նչպէս պիտի հանգուրժեմ գորովոյդ. և սակայն պէտք է: Ի՛նչ կը տեսնեմ. այս մ[թու]թեան մէջ շողողացող ոսկեճամուռի կտաւը. Ս.յո՛, այս է Յակոբայ բնակարանը. մանանթ. ձայն տանիք. բայց ո՛չ. քուրը խողկէլ չըլլար. . .

ՏԵՍԻԼ Գ

ՆՈՅՆ ԵՒ ՍԻՄԵՈՎՆ

ՍԻՄՈՆ. Խաղաղ և անդորր կը քնանան բոլոր որդիք Իսրայելի. Էս միայն արթուն կամ, ու ճակատի վերայ սպառնալից կը կենայ Հզօրին աջը:

ՅՈՎՍԷՓ. Խնդրեմ իրմէ եղբարցս թողութիւնը:

ՍԻՄՈՆ. Կը վախնամ մարդկանց հանգիպել. կարծեմ թէ զիս միշտ կը կշտամբեն ոճրադործութեանս համար, իմ մահահամբոյր գազանիքս չթանցս վերայ է միշտ. . .

ՅՈՎՍԷՓ. Սիմէոն. ամենէն աւելի քեզի կը կարեկցիմ: ՍԻՄՈՆ. Սիմէոն. ո՛վ անունս կուտայ. . .

ՅՈՎՍԷՓ. Ի զուր փախչիլ կուղես քու անձէդ. խիղճը սրտիդ մէջն է. . .

ՍԻՄՈՆ. Ա.յո՛. խղճի խայթը զիս կը ամնջէ:

ՅՈՎՍԷՓ. Յովսեփը միշտ աչքիդ առջևն է և ՚ի յուսահատութիւն կը կրթե քու հոգիդ:

ՍԻՄՈՆ. (Յառաջ գալով դէպ ՚ի խոտ) Ո՛վ որ և խցես, որ վրիժապարտից սրտին մէջ կը կարդաս. մի՛, մի՛ յայտներ իմ ուճիրս. . .

ՅՈՎՍԷՓ. Եւ ո՞վ է հոս. . . ՍԻՄՈՆ. Ո՛չ ապաքէն Սիմէոնին անունը տուիր. մտայ խղճին վերայ չի խօսեցա՞ր. . .

ՅՈՎՍԷՓ. (ճանչաւ շՍԻՄ.) Դո՛ւ ես ուրեմն, թշուառ: ՍԻՄՈՆ. Կը սպառարիմ քեզմէ, քանզի թափանցեցիր սրտիս գաղանիքը, մ՛ըսեր մէկուն. քնութիւնը կը սակայ ինծմէ. . .

ՅՈՎՍԷՓ. Վատարանդ Սիմէոն: ՍԻՄՈՆ. Մ՛ըսեր մանաւանդ հօրս. կը մեռնի ցաւէն. . .

ՅՈՎՍԷՓ. Ես քու թշնամիդ չեմ: ՍԻՄՈՆ. Աստուծոյ որդի մը ըլլալու ես դուն, որովհետև դուշակեցիր այն ոճիրը՝ որ ասանուհինդ տարիէ ՚ի վեր հոգիս կը ամնջէ:

ՅՈՎՍԷՓ. Կը կարեկցիմ քու աղէկացդ և կուլամ. . . ՍԻՄՈՆ. Ես չեմ լար. Աստուած ցամբեցուց աչքերս. սիրտս հրակէզ է:

ՅՈՎՍԷՓ. Ո՛րչափ կը ցաւիմ վրագ, Սիմէոն: ՍԻՄՈՆ. Անունս մի տար. հոս առաքինազարդ հայրս կը հանդէս, իր սնարիցը առջև կը քնանայ Բնեիսմին, իմ յանցաւոր անուամբ քուներնին մի պարորէ:

ՅՈՎՍԷՓ. Ի՛նչ. չես համարձակիր հօրդ երեւակ: ՍԻՄՈՆ. Ո՛չ իր ներկայութիւնը կսկիծս կը զայրացնէ. . .

Գիշերը միայն երբ կը քնանայ կուգամ իր կերպարանքը նկատել, և օրը հաղիւ կը ծագի՛ վայրենի գաղանաց նման անտանները կը թափառիմ:

ՅՈՎՍԷՓ. Բայց թերևս իր խօսքերը քեզ մխլթարեն: ՍԻՄՈՆ. Ա.յլ եթէ Յովսեփայ վերայ խօսք բանայ. . .

ՅՈՎՍԷՓ. Յովսեփայ. . . ՍԻՄՈՆ. Ա.յո՛, իմ Յովսեփի եղբօրս, զոր առեւրութեանս շահեցի:

ՅՈՎՍԷՓ. Ուրեմն ժամանակն ալ չամոքեց ցաւերդ. . . ՍԻՄՈՆ. Հոս է մանաւանդ որ կը ամնջիմ, այս տեղս Յովսեփի իմ աչացս առջևն է միշտ. արթուն յիշողութիւնս կենացս իւրաքանչիւր վայրկեանը կը թունաւորէ, կը տեսնեմ այն գեղեցիկ սպասանին՝ հօրը սերն ու պարծանքը, կը տեսնեմ զինքը խաշինքը արածել Սիւքեմայ գաւարադեղ մարմանդները. այն տեղն ալ կը տեսնեմ արիւնք արմաւենեաց

1001
1553



մօտ կ'աղօթէր և ես վրան յարձակեցայ, կը լսեմ իր անմեղ ճիշերը և կը դռնէ... Հայր իմ, աղատէ զիս (դէպ 'ի Վրանը) Յիմար... Եթէ լսէ զիս. խաղաղութիւն, խաղաղութիւն... Յակօր դեռ կը հանգչի...

ՅՈՎՍԵՓ. Ձու առական... դառն է քու վիճակդ... բայց զըջացեալ սրտի մը՝ Յովսէփ անշուշտ կը ներէ: Այո, երկինք անյապաղ... մի հեռանար քովէս Սիմէան... բարեկամի մը ձայնը թերևս վշտերդ ամորէ...

ՍԻՄՈՆ. Քու ձայնդ սրտիս խորերը կ'աղղէ... քիչ մը սիրտս կը խաղաղի... այս վայրկենիս նուազ դժբաղդ եմ... Աստուած իմ, ո՛հ, թէ որ կարենայի լալ. (Յայն հեռաւոր նոսրաց) բայց օրը չուշանար ծագելու. հիմա եղբարքս ջերմ մաղթանօք Յաւիտենականը կը փառարանեն. ես առ տեղերէս հեռանալու եմ. (օրը կը ծագի Լաբարնին խորը):

ՅՈՎՍԵՓ. Եւ ինչո՞ւ անոնց նուագացը չես ձայնակցիր: ՍԻՄՈՆ. Ո՛չ, յանցաւոր է այս սիրտս... Աստուած կը մերժէ ուխտերս՝ ինչպէս Ապրիլին զոհը. (լայս Վրանս Յաւիտենական): Այլ ի՛նչ կը տեսնեմ. աղօտ լայս մը արդէն աչացս առջև կը նկարի... Ո՛վ երկինք... այս ծիրանեփայլ պատմութիւնը, այս մեծավայելուչ կերպարանքը... ո՛չ, չեմ խաբուիր, Իսրայէլը բարեբարն է. դո՛ւ, Տէր, որ եղեռս կը շանջնաս. անոնց համար ընտանեացս դէմ մի զայրանար... իմ յանցանացս բեռը անոնց վերայ չ'ծանրանայ... դժուրութիւնդ կը հայցեմ թշուառ հօրս վերայ... ներէ եղբարցս և թող ինձ փախչիլ... ո՛ր ալ երթամ՝ Յաւիտենականը կը հասնի ետեւէս... անապատաց խորն ալ, իր անողք արգարութիւնը ինձի կը սպասէ (մէքի շտապաւ):

ՏԵՍԻՒ, Դ

ՅՈՎՍԵՓ (առանձին)

Վեցիր Սիմոն... բայց ինքն ինձի չի լսեր. իմ խնամքն ուրով նորէն խաղաղութիւնը անշուշտ պիտի դանայ: Արդէն արեգակը... (Ի ներքոսօր օրհնելիքս ինչպէս հոստանաց) Առաւօտեան խանդաղակաթ նուագք կը լսուին. ո՛հ, ի՛նչ քաղցր յիշատակներ մտացս մէջ կը զարթուցանեն (դարձեալ նոսրաց):

1223
1001

երանանուէր աւուրք մանկութեան... իմ ձայնս ալ ան առնէն եղբարցս ձայնին կը միանայ (Քրիստոս նոսրաց յայն):

ՏԵՍԻՒ, Ե

ՅՈՎՍԵՓ ԵՒ ԲԵՆԻԱՄԻՆ

ԲԵՆԻԱՄԻՆ. (Վրանէն ելելով) Այո ինձի անծանօթ աւուրքը եղբարցս օրհնելու թեամբքը կը թնդան... Հայրս դեռ կը հանգչի... քնացիր խաղաղութեամբ Իսրայէլ՝ ասպնջական երկրի մը մէջն ես:

ՅՈՎՍԵՓ. Այո է ուրեմն Բենիամին, այն մատաղ տղան զոր այնչափ անգամ դրկացս մէջ կը փայփայէի, և որուն շքութեամբը հազիւ անունս կը թոթովէին...

ԲԵՆԻԱՄԻՆ. (Վրանէն դուրս գալով) Ի՛նչ ճոխութիւն... շտապեալ աչքերս հազիւ կրնան հանդուրժել այսչափ շքեղութեանց...

ՅՈՎՍԵՓ. Անմեղութիւնը կը ժպտի ճակտին վրայ, իր գեղադիտակ կերպարանացը վրայ կը շանջնամ զՆուսթէլ՝ հօրս սիրեցեալը և մեր երկուքին մայրը:

ԲԵՆԻԱՄԻՆ. Եւ ո՞վ է այն բարերար մարդը որ այսչափ մեծափարթամ ճոխութեամբ Յակօբայ որդիքը կ'ընդունի... (Գեղեցիկ Վրանէն) Այլ ո՞վ զարմանք... ո՞վ ուրեմն...

ՅՈՎՍԵՓ. Հանդարտէ Բենիամին. ԲԵՆԻԱՄԻՆ. Օտտրական, անունս գիտես դուն և սակայն ես զքեզ չեմ շանջնար: Ոսկեճամուկ պատմութեան ինձի կը յայտնէ որ Մեմփիսի բնակիչներէն ես:

ՅՈՎՍԵՓ. Երկար ժամանակ է որ հոս կը բնակիմ. բայց սիրելի են սրտիս Քանանու բնակիչք:

ԲԵՆԻԱՄԻՆ. Ուրեմն կը շանջնաս այն հուշակաւոր իշխանը որ այնչափ սիրով զմեզ կը հիւրընկալէ:

ՅՈՎՍԵՓ. Այո, Բենիամին, կը շանջնամ:

ԲԵՆԻԱՄԻՆ. Ըսէ իրեն թէ որչափ ամենքս ալ զինքը կը սիրենք. լսէ թէ հայրս կ'օրհնէ իր անունը, և թէ երբոր վերադառնանք մեր հայրենիքը...

ՅՈՎՍԵՓ. Հայրենիքդ, Բենիամին...

ԲԵՆԻԱՄԻՆ. Այո, այն բարեբաատիկ երկիրը՝ զոր Աստուած մեր հարցը առաւ:

ՅՈՎՍԵՓ. Կը բաղձան տեսնել նորէն Քերրոնի մարման զնէրը:

ԲԵՆԻԱՄԻՆ. Հոն են իմ խնձարուքս:

ՅՈՎՍԵՓ. Իմ քովս ալ չես մոռնար զանոնք:

ԲԵՆԻԱՄԻՆ. Երբէք մեր հարց սոկերոտիքը և Աստուծոյ սեղանը հոն ձգեցինք:

ՅՈՎՍԵՓ. (գրէիւ) Սիրեցեանք իմ Բենիամին:

ԲԵՆԻԱՄԻՆ. Կը գրիկն զիս. և ինչ է քու գորովանացդ պատճառը:

ՅՈՎՍԵՓ. Մանկութիւնդ ու անմեղութիւնդ. որչափ արդէօք կը սիրէ զքեզ հայրդ:

ԲԵՆԻԱՄԻՆ. Իր սրտին մէջ զՅովսէփի փոխանակեցի:

ՅՈՎՍԵՓ. ԶՅովսէփի:

ԲԵՆԻԱՄԻՆ. Այո՛, սիրեցեալ եղբայր մը զոր կորսնցուցինք. շատ մատաղ էի այն տանն և չէի հասկընար այնչափ հեծկլանանց և յուզմանց պատճառը. բայց հօրս արատուքը տեսնելով ես ալ կուշայի:

ՅՈՎՍԵՓ. Ո՛վ գողար լեզու անմեղութեան:

ԲԵՆԻԱՄԻՆ. Ո՛հ, երբ անաղորոյն մահը այս սիրեցեալ որդին մեզմէ յափշտակեց, ցաւոյ մէջ Յակոբ կը մաշէր, և իր վշտահար հոգին մխիթարելու համար զիս իր ծոցը տարին, և հայրս վերստին զանել կարծեց զՅովսէփի: Իրեն կ'ուզէիցէի ամեն տեղ, և զինքը կը սփոփէի անուշ խօսքերով և իր ծեւրութեանը նեցուկը ըլլալով. կ'ըսէին մեր տունը որ անկեղծ էր Յովսէփի և Քերրոնի, ես ալ հօրս սերը գրուեցու համար իրեն նմանող ըլլալ կը ջանայի...

ՅՈՎՍԵՓ. (գրէիւ Վեն. Կայմ.) Սիրեցեանք իմ Բենիամին, երկայն օրեր ապրէ այսպիսի բարեսիրտ հօր մը գրկացը մէջ. գո՛ւ միայն կրնաս կորուսեալ Յովսէփայ տեղը բռնել...

ԲԵՆԻԱՄԻՆ. Զեմ յուսար երբէք: Բայց արդէն եղբարքս արթնցեր են, արեւը կը ծագի և Յակոբ զեւ կը քնանայ:

ՅՈՎՍԵՓ. Առանց քունը ընդմիջելու, Բենիամին, կրնամ արդէօք նկատել իմ... քու հօրդ վէճ կերպարանքը:

ԲԵՆԻԱՄԻՆ. Ո՛հ, բան մը չեմ կրնար զմանալ քեզի... բայց զգուշանանք որ չ'արթննայ (Վրանը էր Բայտի, Յակոբ ճիւղ Բայից լքայ քնացած):

ՅՈՎՍԵՓ. Ահա այն աստուածարեալ ծերունին, վերջա...

պէս կարօտ աչքերս զինքը վերստին կը տեսնեն... տարեք իր վայելուչ կերպարանքը չէ եղծած. իր ճակատն առաքինութիւն կը ճառագայթէ... Ո՛հ, անոր տեսքը ինչպիսի՞ զմայլմամբ հօգիս կը լեցնէ:

ԲԵՆԻԱՄԻՆ. Ինչո՞ւ այլայլէր ես, Տէր իմ:

ՅՈՎՍԵՓ. Բենիամին... սիրտս... բայց կը քնանայ: Պէտք է հնազանդիմ սրտիս զղացմանցը. այս վէճ ճակատին առջև, ՚ի ծուծի խնարհինք և սիրահոս արատուօք ողողէնք այս մեծարելի ձեռքերը (Ծնբարդ-Բէմբէ Լոյ):

ԲԵՆԻԱՄԻՆ. Օտարական, որդիական գութն անգամ աս կէ աւելի պատկառանք կամ սէր կրնայ աղգել:

ՅՈՎՍԵՓ. Բենիամին, ո՞չ ապաքէն ամեն բարի մարդկանց հայրն է սա:

ԲԵՆԻԱՄԻՆ. Իրաւ է. (Հեռուօր յայն ծնծղայից և պարբերաւ ճակատն առաքաց) ինչ պատերազմական պրնակներ կը լսեմ:

ՅՈՎՍԵՓ. (Վիտի) Աւանդ. Ժողովուրդը յալթանակ տեսնելու անհամբեր ՚ի Մեմփիս կը հրաւիրէ զիս: Անագոս ընցն պատիւը... և ինչպէս թողում հայրս...

ՏԵՍԻՒ Զ

ՅՈՎՈՐ ԵՆ ԱՌԱՋԻՆՔ

ԲԵՆԻԱՄԻՆ. Հեռուօր նուագաց ձայնը հայրս կը զարթուցանէ:

ՅՈՎՍԵՓ. (Վիտի) Բայցը վայրկեան... (Կարճնայ Յակոբ)

Ինչ անպատում զմոյլմամբ հօգիս կը զեղու:

ԲԵՆԻԱՄԻՆ. Իսպառ լուսան զուրկ են իր աչքերը, օտարական. ինքն զքեզ պիտի չկարենայ տեսնել:

ՅՈՎՍԵՓ. (Վիտի) Ո՛վ հայր իմ, ինչո՞ւ չկրնար որդիդ իր գրկացը մէջ զքեզ ամփոփել...

ԲԵՆԻԱՄԻՆ. Իր գողգոջուն բայլերուն առաջնորդը Բենիամին է:

ՅՈՎՈՐ. (արժնանալով) Լուէ իմ ազօթքս, Աստուած Աբրահամու. գերզմանին դուռն հասած, անգարձ հրամանդ իմ հարցս երկրէն զիս կը հեռացնէ: Հօր ու ամենակալ, եթէ կ'արգիլես որ իմ ոսկերքս հօրս ոսկերացը հետ հանգչին՝ նայն

չըրմին մէջ, իմ աղետիցս մէջն ալ կը պաշտեմ քու վճիռ-
ներդ. կը մեռնիմ եթէ հարկ է՝ պանդխտութեան երկրին
մէջ. բայց որդիքս գոնէ երջանիկ ըլլան:

ՅՈՎՍԷՓ. Իր վերջին մտածութիւնն ալ որդիքն են:

ՅԱԿՈՒԲ. Բենիամին, անցաւ արդեօք աղօթից ժամը..

չէմ լսեր եղբարցդ աղօթքի ձայնը:

ԲԵՆԻԱՄԻՆ. Արեգակն արդէն հորիզոնին վրայ կը ծածա-
նի. նուազները դադրեցան:

ՅԱԿՈՒԲ. Ո՛վ խն Բենիամին.. ի՞նչ տեսիլք խրկեց ինձի
Տէրը. անշուշտ ամբէլ ուղեց ցաւոցս դառնութիւնը.. լսէ
այս ահարկու, այլ և ասորժ երազը..

ԲԵՆԻԱՄԻՆ. Մտիկ ընեմ, հայր:

ՅՈՎՍԷՓ. Քանանացոց երկիրը Նեղոսի ափունքներէն
զատող անաստան մէջէն կ'անցնէի. աղաքս չորս կողմն
էին, և ըստ իմ սովորութեանս վրագ կը կռթռնէի:

ԲԵՆԻԱՄԻՆ. Ես ալ անշուշտ կը ջանայի նուազ տարժա-
ները ընել քեզի ճամբան:

ՅԱԿՈՒԲ. Այո՛, որդեակ իմ: Յանկարծ անաստաց դառ-
նաշունչ հովերը կը սկսին շնչել, և օդոց մէջ աւաղակոյտ ամ
պէր կը զիղուին. ծառայիցս և ուղտերուս նման՝ ես ալ
զըրեւս կը ծածկէի, մահուրնէ խորշուռ համար: Մորիկը կը
ցնդի, անամս երկնից մէջ արևը կը շողայ, քրտնաթոր շա-
կասս վեր կը վերցընեմ. այլ աւանդ, առանձին կը դանամ ինք-
զինքս հրատոջոր և ամայի դաշտի մը մէջ, որուն ծայրերը հո-
րիզոնին հետ կը խառնուէին: Բոլոր որդիքս զիս ձգեր էին:

ԲԵՆԻԱՄԻՆ. Ե՛ս ալ, հայր իմ, ո՛հ, ո՛չ. կը խաբուիս. քովդ
էի ես:

ՅՈՎՍԷՓ. Ո՛չ որդեակ, մինակ էի:

ԲԵՆԻԱՄԻՆ. Ես թողնում քեզդ. ուրեմն եղբարքս զիս
առեր տարեր էին:

ՅՈՎՍԷՓ. (Քիտախ) Ինչպիսի ոճիր մը մտացս մէջ կը զար-
թուցանէ այս տղան:

ՅԱԿՈՒԲ. Մխայտակ էի, հրակեղ ծարաւով մը շրթունքս կը
պապակէին, ուժս կը նուաղէր և մահուան երգեր կ'ուղչէի
առ Տէր. որդւոցս համար կ'աղօթէի..

ԲԵՆԻԱՄԻՆ. Որդւոցդ..

ՅԱԿՈՒԲ. Եւ ա՛հս յանկարծ ձայնդ լսեցի:

ԲԵՆԻԱՄԻՆ. Ես ալ անշուշտ ծոցդ զիմեցի:

ՅԱԿՈՒԲ. Օտարականի մը ձեռքէ բռներ էիր դուն. ինքն
ինձի արմուս մը ընծայեց. այս վեհաղն ու գեղեցիկ օտարա-
կանը դէպ ինձի ծուեցաւ, աչքերս 'ի լոյս բացուեցան.. և
ճանցայ զՅովսէփ..

ՅՈՎՍԷՓ. (Քիտախ) Ո՛վ հայր իմ:

ԲԵՆԻԱՄԻՆ. Ի՛նչ. այն Յովսէփը որ ալ չկայ:

ՅԱԿՈՒԲ. Ողջագուրեցի զինքը սրտիս վերայ.. իմ զա-
ւակս, իմ սիրելի զաւակս կը կոչէի զինքը. ո՛չ. կենացս մէջ
աւելի երջանիկ վայրկեանս մը չեմ ունեցած: Որդեակ իմ
Յովսէփ.. իմ սիրեցեալ Յովսէփս.. ո՛վ իմ սրտիս անուշ
զաւակը, ծերութիւնս ինձի մոռնալ չտուտու դբեղ..

ՅՈՎՍԷՓ. (Քիտախ) Ո՛վ սրտաուռչ տեսիլ. և սակայն
իր առջէն է Յովսէփ:

ԲԵՆԻԱՄԻՆ. Ալ մի լար հայր իմ, ցաւերդ ամբէլ:

ՅԱԿՈՒԲ. Արթուն ըլլամ կամ քնանամ, զինքը միշտ կը
կարծեմ տեսնել. ինչ քաղցր ձայն որ լսեմ, կը յլելմ իր
քնքուշ ձայնը:

ԲԵՆԻԱՄԻՆ. Ո՛վ անմխիթար կսկիծ:

ՅԱԿՈՒԲ. Երբոր տեսնեմ մայր մը որ ծոցին մէջ սիրեցեալ
որդի մը կը գգուէ, զքեզ կը յլելմ ան առնին ալ ո՛վ իմ Յով-
սէփ.. և սակայն դու՛ իմ ծերութեանս յոյսը, դու ես հիմայ
անգարման չարեացս աղբիւրը:

ՅՈՎՍԷՓ. Ա՛լ չեմ զիմանար.. չեմ կրնար զուպել սրտիս
յուզմունքը. (Ժողովը լռէր):

ԲԵՆԻԱՄԻՆ. Ի՛նչ կը տեսնեմ..

ՅՈՎՍԷՓ. (Գրէն Քիտախ հօրն, Քիտախ) Ո՛վ հայր իմ, հայր:

ՅԱԿՈՒԲ. Ո՛վ կը համբուրէ ձեռքս.. ո՛վ կ'օղողէ զայն ար-
տասուօք:

ՏԵՍԻՒԷ

ՆՈՅՆՔ ԵՒ ՈՒԴՈՒՅԱԼ

ՈՒԴՈՒՅԱԼ. Անպատում բերկրութեամբ լեցուած՝ Ժողը-
վուրդը կը սպասէ, ո՛վ Տէր, տեսնել իր ազատարարը յաղ-
թական կառայ վրայ, գէմ մի կրնար իր սիրոյն, խնդութեան
աղաղակներով կը կոչեն զԿէտիաս:

ԲԵՆԻԱՄԻՆ. } ԿԷՏՈՒՄՆ:
ՅԱԿՈՅ.

ՅԱԿՈՅ. Ո՛ւր է ուրեմն ԿԷՏՈՒՄՆ.

ԲԵՆԻԱՄԻՆ. Ինքն է որ դողդոջուն ձեռքերդ արտասուօք կ'ողողէր:

ՅԱԿՈՅ. Ի՞նչ կը ըեմ. սո՛վ հիւսպանչ աղնուռ[թիւն. . .

Տէր իմ, շնորհապարտ ոգւով ծնդացդ կը փարիմ. . .

ՅՈՎՍԵՓ. Մնդացս. . . ո՛չ. ո՛չ. . . այլ սրտիս. . . (Խորան Բաղ-
ճառիս հրէից և Եփեմացացոյ):

ՈՒԳՈՒՅԱԼ. Ահա քաղաքացւոց խումբը յառաջ կուգայ,

Տէր:

ՅՈՎՍԵՓ. (Յախճատ և Բենիամինի յեռփէն բռնեւլ) Եկէք, եկէք երկուքնիդ ալ, ես ձեզն պիտի առաջնորդեմ. հալըդ եղէք փառացս՝ զոր երախտապարտ ժողովուրդ մը ինծի կը պատրաստէ. Եթէ իմ՝ յաղթական կառացս վերայ բազմն ինծի հետ Յակոբ և Բենիամին, Մեմիխ թող իմանայ թէ սրջափ կը մեծարեմ առաքինութիւնն ու անմեղութիւնը:

Պար

Սորվեցէք, երկրիս աշխարհակալք, թէ ի՞նչ է ճշմարիտ փառքը: Պատերազմաց արիւնուռչտ ոգին չ'զիներ իր բազուկը. իր յաղթանակը աւերակաց վերայ չէ՛, այլ երջանկացեալ մարդկանց մէջ՝ որոնք կենօք չափ իրեն երախտապարտ են:

(Ի խորս Լապեր, Էանայս և Տանկոի և խումբ զբախտանոց Ժաղխամբ և խնկոս. — յաղթական կարգ. ուր բազմն Յախճատ և Յովսէփ, առ ոպս նոցա Բենիամին):

24-Ի ՎԱՐԱԳՈՅՐՆ

ԱՐՄԱՐՈՒԱԾ Գ.

Ապարանք Յովսէփու, մէկ կողմը սեղան: Յակոբ իր որդւովքը սեղանին շուրջը. հակառակ կողմը այն ատենուան երաժիշտք կը նուազեն. առջևէն գերի. ներ, ոսկի ամաններ կը լեցնեն, և այլն:

ՏԵՍԻԼ Ա.

ՅՈՎՍԵՓ, ՅԱԿՈՅ, ՈՐԳԻՄ ՅԱԿՈՒՅՈՒ (բաց 'ի Սիմէոնէն).

ՅԱԿՈՅ. Ո՛վ որ երկցս երջանիկ, ի՞նչ խաղաղութիւն, սո՛վ Տէր. մի թէ այսչափ պատուոց արժանի էին աննշան հովուք: ՅՈՎՍԵՓ. Պիտի զխնասս քիչ ատենէն այսչափ յարգաւնաց պատճառը:

ՅԱԿՈՅ. Արժանի կը սեպես քովս նստիլ, և իմ որդիքս չորս կողմս խմբել:

ԲԵՆԻԱՄԻՆ. Բաց 'ի Սիմէոնէն, հայր իմ:

ՅԱԿՈՅ. Ի՞նչ գեռ ինձմէ կը փախցի՞ Սիմէոն. բաւական էր Յովսէփը կորանցնելը:

ՈՒՌԻԵՆ. Յովսէփը. . . պէտք է ուրեմն հանդիսից մէջ, այսպիսի հզօր և վեհանձն իշխանի մը առջև յիշատակել ողբա՛լ Յովսէփայ վրայ:

ՅԱԿՈՅ. Ո՛վ իմ անդրանիկս, իբրև տարապայման կը կշտամբես ցաւերս. . . չէս յիշեր Ուրբէն, այն օրը յորում իր մահը ինծի գուժեցիր. . . արցունքներ կը սահէին աչքեզ. . . զուք եղբայր էք միայն. կրնտք զինքն մոռնալ. բայց հայր մը միշտ արցունքներ ունի իր կորուսեալ որդւոյն համար. (Յովսէփ գրէ զաջ Յախճատ). Դո՛ւ ես Բենիամին որ ձեռքս կը սեղմես խանդաղատանօք:

ԲԵՆԻԱՄԻՆ. Ո՛չ, հայր իմ, բարերար իշխանն է:

ՅԱԿՈՅ. Ներէ, Տէր, որդւոյս ձեռքը կարծեցի:

ՅՈՎՍԵՓ. Հոգ մ'ըներ ալ Սիմէոնին վրայօք Յակոբ. զինքը բնաւեւր մարդ խրկեցի, անյապաղ հոս կուգայ: Գերիներ, հեռացէք (ձեռքն երաժիշտ և սպրտի): Հիմայ թող քաղց.

ցրանուազօրհնութիւններ երդինք՝ի պատիւ հզր Ամենակալն
և բարձրելոյն...

ՅԱԿՈՒՆ Ի՛նչ կը լսեմ, ո՛վ Տէր. մի թէ մեր օրինաց կը
հնազանդին գու ալ:

ՏԵՍԻՒ Բ

ՆՈՅՆԲ ԵՒ ՈՒԴՈՐԱՒԱ

ՈՒԴՈՐԱՒԱ. Մի սկսիր նուազները, Տէր իմ. ՚ի զուր Փա-
րասն կը մեծարէ զքեզ, և ՚ի զուր քեզի երախտապարտ կը
դաւանի ինքզինքը Եգիպտոս: Գու փառացդ ու առաքինու-
թեանդ նախանձոտ թշնամիք կը համարձակին ամբաստանել
զքեզ:

ՅՈՎՍԷՓ. Եւ ո՞րն է յանցանքս:

ՈՒԴՈՐԱՒԱ. Առանց հրամանի օտար ժողովուրդ մը հիւր-
ընկալելդ. Եգիպտացոց սահմանեալ նպաստները անոնց
բաշխելդ, և քեզի միայն սեփական պատիւներուն մասնակից
ընել անձանթ հովիւ մը:

ՅԱԿՈՒՆ. Վէհանձն մարդ, արդեօք տղետկցդ պատճառ
պիտի ըլլանք:

ՅՈՎՍԷՓ. Անհոգ եղիր, ծերունի:

ՈՒԴՈՐԱՒԱ. Արդէն անարգ գրանիկներ հէս և երկպառա-
կութիւն կը ցանեն այս երկու ժողովրդոց մէջ. այս օտարա-
կանաց շատը, արդէն նախատակոծ...

ՅՈՎՍԷՓ. Նախատէ՛լ Քանանու ժողովուրդը... դողան
յանցաւորք... Բայց փութմանք յոտս Փարաւոնի. աս մեծ
թագաւորը կ'անսայ ճշմարտութեան... Ահներև պիտի տես-
նուի Աստուծոյ արդարութիւնը և թշնամիներս ամօթա-
պարտ պիտի կործանին: Իուք, որդիք Յակոբու, ձեր ծա-
ւաններով իմ պաշտապագէք, էս եմ ձեր կենացը պատաս-
խանատուն: Իսկ դուք, Եգիպտացիք, կ'երդնում յանուն Ա-
ստուծոյն որ ձեր ապագայ թշուառութիւնները ինձի յայա-
նեց, ո՛վ որ ամբարիշտ ձեռք մը վերցընէ Իսրայելի որդւոցը
վերայ՝ մահապարտ է: Թիկնապահ՛ք, պաշտապանեցէք այս
օտարները՝ ուղեկցելով անոնց: Բենիամին, հօրդ քով կեցիր
դուն (Բենիէն Յովելի և Ուրոբալ, ասքի և անքի որդիք և Բիկնապահ):

ՏԵՍԻՒ Գ

ՅԱԿՈՒՆ ԵՒ ԲԵՆԻԱՄԻՆ

ՅԱԿՈՒՆ. Բարերար մարդ... երկնից օրհնութիւնը...

ԲԵՆԻԱՄԻՆ. Ա՛լ ինքը չիլսեր...

ՅԱԿՈՒՆ. Նուազ եւանդուն չըլլան մեր իղձերը իր բացա-
կայութեան ատենն ալ. ճանչցիր թէ ինչ աղչու է երախ-
տադիտութիւնը, երբոր մեր բարերարին ձայնը կը լսեմ, գող
մը, սարսուռ մը կը զգամ...

ԲԵՆԻԱՄԻՆ. Ինչն ալ անտարբեր աչքով քեզի չինայիր.
քուն եղած ասենդ մինչդեռ իմ սիրոյս և քու առաքինու-
թեանց վերայ կը խօսէի իրեն, դէպ ՚ի քեզ ծուեցաւ և աչ-
քերը արցունքներ հոսեցին:

ՅԱԿՈՒՆ. Ի՛նչ այս մեծ մարդը Յակոբայ առջև խոնարհե-
ցաւ:

ԲԵՆԻԱՄԻՆ. Այո՛, հայր իմ. « Բենիամին, ըսաւ ինձի,
երկիր պագանելով կը մեծարեմ հօրդ ծերութիւնը »:

ՅԱԿՈՒՆ. Օրհնեալ ըլլան իր ծնողքը... օրհնեալ ըլլայ այն
հայրը որ զինքը իր որդին կրնայ կոչել...

ԲԵՆԻԱՄԻՆ. Ո՛վ երկցս երջանիկ այն աղուն որ զինքը իրեն
եղբայր կրնայ կոչել:

ՅԱԿՈՒՆ. Եւ ո՞ւր առաջնորդեց մեզ, այս մեր ընտանեաց
աղստարարը:

ԲԵՆԻԱՄԻՆ. Ոսկէձեղուն արբունեաց մէջ:

ՅԱԿՈՒՆ. Շատ հարուստ է ուրեմն:

ԲԵՆԻԱՄԻՆ. Միրանիփայլ պատմուճախ կը հագնի:

ՅԱԿՈՒՆ. Չորս զին թիկնապահ՛ք կան:

ԲԵՆԻԱՄԻՆ. Օր մը բաւական չէ իր գերիները համբերու-
համար:

ՅԱԿՈՒՆ. Սիրելի է ժողովրդեան:

ԲԵՆԻԱՄԻՆ. Լսեցիր Եգիպտացոց խնդադին արմուկները:

ՅԱԿՈՒՆ. Սակայն անոր ալ թշնամիները կան:

ԲԵՆԻԱՄԻՆ. Հայր իմ, ինչո՞ւ թշնամիներ կ'ունենայ մարդ,
երբոր ինքը ամենուն ավելութիւններ կ'ընէ:

ՅԱԿՈՒՆ. Վանդի չարասէր մարդիկ կան: Կլեոփան է ա-
նունը:

ԲԵՆԻԱՄԻՆ. Այո՛, հայր:
 ՅԱԿՈՒԲ. Այո երկիրը ճանա՞ծ է:
 ԲԵՆԻԱՄԻՆ. Չեմ գիտեր:
 ՅԱԿՈՒԲ. Նկարագրէ ինձի իր կերպարանքը:
 ԲԵՆԻԱՄԻՆ. Վայելագէ՞մ է ու բարձրահասակ. իր խոր-
 ալը ազդեղ մազերը խողովքներով ուսուցը վերայ կ'ընան:
 ՅԱԿՈՒԲ. Ո՛հ ինչպէս Յովսէփին կը նմանի, Բենիամին:
 ԲԵՆԻԱՄԻՆ. Անուշ է իր նայուածքը և ձայնը...
 ՅԱԿՈՒԲ. Յովսէփայ ձայնը կը կարծէի լսել, երբոր կը խօ-
 սեր:

ԲԵՆԻԱՄԻՆ. Երեսուն դարուն զեռ հազիւ տեսած է:
 ՅԱԿՈՒԲ. Յովսէփա անոր հասակակից պիտի ըլլար:
 ԲԵՆԻԱՄԻՆ. Ինչո՞ւ անօգուտ յիշատակներով ցաւերդ կը
 նորոգես: Ա՛լ Հապթէլայ որդին իմ եղբայրս չիկայ...
 ՅԱԿՈՒԲ. Գիտե՞մ, գիտե՞մ որ զաւակս կորսուեցաւ, յան-
 ցաւոր եմ զինքը յիշեցովս: Ո՛չ ապաքէն իմ սրտիս մէջ դու
 անոր տեղը բռնեցիր: Բենիամին, առանց քեզի մինակ պիտի
 մնայի: Եղբարքդ զաւակի տէր են, մուսցան հայրերնին, ո՛հ
 գոնէ դու զիս մի՛ ձգեր:

ԲԵՆԻԱՄԻՆ. Երբեք, երբեք իմ սիրելի հայրս:
 ՅԱԿՈՒԲ. Աչացս լայր մ'ըննցաւ և ծերութիւնը վրաս կը
 ծանրանայ. բայց զեռ որդի մը ունիմ: Եկուր ուրեմն որ գըր-
 կեմ զքեզ, սիրեցեալ Բենիամին:

ՏԵՍԻՒ Դ

ՍՊԱՅ, ՅԱԿՈՒԲ, ՍԻՄՈՆ

ՍԻՄՈՆ. Ո՞ւր կը տանիս զիս:
 ՍՊԱՅ. Կընդհանուր կը հրամայէ որ հօրդ քով կենաս (Բէ-
 ֆ):

ՏԵՍԻՒ Ե

ԲԵՆԻԱՄԻՆ, ՅԱԿՈՒԲ, ՍԻՄՈՆ

ԲԵՆԻԱՄԻՆ. Դուն ես Սիմէոն. եկուր մեկտեղ մտի՞ծա-
 րէնք հայրերնիս:

ՍԻՄՈՆ. Ե՛ս մտի՞ծարեմ զինքը, Բենիամին:
 ԲԵՆԻԱՄԻՆ. Մըշտ Յովսէփայ վերայ կը խօսի:
 ՍԻՄՈՆ. Յովսէփայ... Աստուած իմ:
 ՅԱԿՈՒԲ. Ինչո՞ւ քովս կը փախչես՝ Սիմէոն: Եթէ մեծ
 կսկիծ մը կը հիւճէ հողիդ, չի յայտնես հօրդ. իրմէ աւելի
 կրնայ մէկը զքեզ ստիպիլ. բայց ինձի սիրտդ որդեակի, ըսէ
 ցաւերդ:

ՍԻՄՈՆ. Ո՛հ, երբեք...
 ՅԱԿՈՒԲ. Մի՛ թէ դու ալ եղբարցդ պէս պիտի կտամբէս
 զիս որ Յովսէփայ վերայ կուրամ. դու ալ հայր ես, Սիմոն,
 եթէ յանկարծահաս աղէաք մը որդուցդ մեկէն զքեզ զրկէ,
 ո՛վ կրնայ մտի՞ծարել զքեզ:

ՍԻՄՈՆ. Սիրտս կը կեղեքես, հայր:
 ՅԱԿՈՒԲ. Եւ սակայն եղբարքդ կը կարծեն որ զանոնք
 կ'արհամարհեմ Յովսէփայ վերայ լայրով: Ապերախաներ...
 հօր մը սիրտը չեն ճանչնար: Տուր ինձ քու ձեռքդ Սիմոն.
 հաւատաս ինձ՝ Թէ հայր մը ան զաւակը կը սիրէ աւելի որ
 մըշտ իր քովն է, որ զինքը կը գգուէ և կը մտի՞ծարէ:

ՍԻՄՈՆ. Գու բարեարտութիւնդ զիս ամօթապարտ կը
 ձգէ:

ՅԱԿՈՒԲ. Կը ճանչնամ զքեզ, Սիմէոն. քու եռանդուն
 հրավառ սիրտդ շատ անգամ զքեզ ինձմէ հեռացուց. արհա-
 մարհէցիր դուն եղբարցդ զբօսանքները և ընտանեաց անմեղ
 հրճուանքները: Որտոց մէջ պատերազմական զբաղմունքներ
 ինդրեցիր. ակորժակացդ վայրենութիւնը, անտառաց միայ-
 նութիւնը, գաղանաց հետ կուռիլդ խտացուցի՞ն արդեօք
 սիրտդ. մի թէ չարացար և յանցանք մը գործեցիր... արդեօք
 արիւն թափեցիր...:

ՍԻՄՈՆ. Ո՛չ ընաւ, ո՛չ ընաւ. սուրբ են ձեռքերս մարդ-
 կային արենէ... բայց ո՛վ Աստուած...:

ԲԵՆԻԱՄԻՆ. Ինչո՞ւ, ո՛վ հայր իմ, այսպիսի կասկածներ
 կ'ընես Սիմոնին վերայ... ո՛չ ապաքէն Յակօբայ որդին է... կըր-
 նայ քու աղքատօճից յանցաւոր ըլլալ մարդկանց կամ Աս-
 տուծոյ առջև:

ՍԻՄՈՆ. Յակօբայ սերունդը Աստուծմէ պիտի անիծուի:
 ԲԵՆԻԱՄԻՆ. Ո՛հ, ի՞նչ կ'ըսես եղբայր:
 ՍԻՄՈՆ. Ներէ՛... տաղնասու... ցնորբս...:

ՅԱԿՈՒՑ. Ո՛չ, Սիմէոն. Աստուած իր ծառային ըսաւ...
«Եզրկատուի մէջ օրհնես պիտի քու զաւակներդ, անոնցմէ
Թագաւորներ պիտի ծնանին, և քու որդիքդ ծովու աւազին
չափ շատնալով պիտի ծածկեն բոլոր երկիրը»:

ՍԻՄՈՆ. Բայց սա ալ ըսաւ. « Սիմոն, գաւազան բռնու-
թեան, Յակրբու փառքը պիտի չի վայելէ »:

ՅԱԿՈՒՑ. Ո՛վ յայտնեց քեզն Սասունեայ կամբը...

ՍԻՄՈՆ. Ըսաւ նաև. « Յովսէփը պիտի ըլլայ բեղմնաւոր
ուսար »:

ԲԵՆԻԱՄԻՆ. Կեցիր, եղբայր. ինչո՞ւ Յովսէփայ վերայ կը
խօսիս:

ՅԱԿՈՒՑ. Անդու՞թ, չէն գիտեր որ ալ ինքը չ'կայ:

ՍԻՄՈՆ. Ո՛վ կսկիծ... ո՞վ սաղմապ...

ՅԱԿՈՒՑ. Մի թէ բոլոր որդիքս իր կորուստը չողբացնին:

ԲԵՆԻԱՄԻՆ. Ծաղիկ հասակիս մէջ էս ալ վրան լացի:

ՍԻՄՈՆ. Ինքզինքս ալ չեմ կրնար զսպել. Աբրահամու

Աստուածը զիս կը հալածէ... Աչքիս առջևն է մահուան
հրէշտակը. սպաննալից ձայնով զիս երկնաւոր ատենը կը
հրաւիրէ:

ՅԱԿՈՒՑ. Ի՞նչ գործեցիր ուրեմն, թշուաւ...

ՍԻՄՈՆ. Պիտի անիծես զիս, Յակրբ:

ՅԱԿՈՒՑ. Զքեզ անիծել... ո՞վ երկինք:

ՍԻՄՈՆ. Ոճիր մը գործեցի...

ՅԱԿՈՒՑ. Ոճիր մը... և Յովսէփայ անուն առիր:

ԲԵՆԻԱՄԻՆ. Ո՛վ չար, արդեօք զի՞նքը սպաննեցիր:

ՍԻՄՈՆ. Ո՛չ, ո՛չ, եթէ արգար է Ալեանակալը, դեռ կ'ապրի
և պէտք է որ ապրի իր յանցաւոր եղբարքը սպառօքու չա-
մար:

ԲԵՆԻԱՄԻՆ. Իր յանցաւոր եղբարքը...

ՅԱԿՈՒՑ. (Ենթադրեալ) Մեռած չէ՞ Յովսէփ. Տաննէջինդ
ապրի է որ կուլամ, և դուք իմ դառն արտասուացս զիմացնք:

ՍԻՄՈՆ. Քու արտասուքդ սրտիս վերայ ինկան և ծովու
մը նման ողողեցին զայն:

ՅԱԿՈՒՑ. Բայց ո՞չ ապաքէն դու գուժեցիր ինձի որ գա-
զան մը լափեց զինք...
ՍԻՄՈՆ. Խաբեցի զքեզ:

ՅԱԿՈՒՑ. Ո՛չ սպաքէն եղբարքդ, երբոր քօլս դարձան,

մտիկր յանեցին իրենց զընուն վերայ և աղիսուրմ ճիչեր ար-
ձակեցին:

ՍԻՄՈՆ. Խաբեցին զքեզ:

ՅԱԿՈՒՑ. Դու չտուիր ինձի իր արիւնհուսայ սպամուծանը
և արտու՞մ ձայնով մը ըսիր. « Լաց, հայր իմ, լաց, չար գազան
մը լափեց սիրեցեալ որդիդ »:

ՍԻՄՈՆ. Խաբեցի զքեզ:

ՅԱԿՈՒՑ. Նենգաւորք... ո՞ր աշխարհքը տարեք զինք...
մը տեղ պիտի կրնամ զինքը գտնել:

ՍԻՄՈՆ. Զեմ գիտեմ:

ՅԱԿՈՒՑ. Որո՞ն էր այն զգեստը որ ինձի բերեք:

ՍԻՄՈՆ. Յովսէփայ:

ՅԱԿՈՒՑ. Հասցա արիւնը:

ՍԻՄՈՆ. Գառնուկի մը զոր մերթեցի:

ՅԱԿՈՒՑ. Ո՛վ տարապայման ցաւոցս... ըսէ, ըսէ ինձ, ո՞ւր
է եղբայրդ:

ՍԻՄՈՆ. (տակաւ) Յաւիտենականին ձայնն է որ զՎայէն
կը հարցաքննէ:

ԲԵՆԻԱՄԻՆ. Ո՛ւր է եղբայրս, ի՞նչ ըրիր:

ՍԻՄՈՆ. Ուղեցի վերաւորել. բայց Բարձրելուն ալը
փընեց ձեռքիս մէջ սպաննալից երկաթը... Մի ինդրեր ինձմէ
արիւնը... քանզի չհոսեց:

ՅԱԿՈՒՑ. Ի՞նչ ըրիր զինքը:

ՍԻՄՈՆ. Ծախեցի:

ՅԱԿՈՒՑ. Ծախեցիր...

ԲԵՆԻԱՄԻՆ. Յովսէփայ արիւնը գերկներու մէջ...

ՍԻՄՈՆ. Հայր իմ...

ՅԱԿՈՒՑ. Քու հայրդ...

ՍԻՄՈՆ. Ո՛չ. անիծեալ եմ: Այս սուրբ անունը շրթուհըս
կ'այրէ:

ՅԱԿՈՒՑ. Եղբարքդ ալ յանցաւոր են:

ՍԻՄՈՆ. Ես ամենէն աւելի:

ՅԱԿՈՒՑ. Նենգաւորք... ո՞վ գրդեց զձեզ այս եղևնը գոր-
ծելու...

ՍԻՄՈՆ. Մախանք, նախանձ և ատելութիւն. Յովսէ-
փայ վերայ միայն կը խօսէիր, Յովսէփը միայն կը սիրէիր...
և Յովսէփը մեզի սթգալի եղաւ... իր կորուստը վշուեցնեք... ո՛չ

էթէ այն օրուընէ 'ի վեր խղճիս խայթն ու տաղնապները տեսնելիր.. Աստուծոյ բազուկը՝ Կայենի նման զես շանթահար ըրաւ.. Բարձրեալը զնորեց միտքս.. ցամբեցուց անգամներս.. դատապարտութեան կնիքը ճակատիս վերայ դրոյվեց.. կողակցես, որդւոյս քով 'ի զուր սփոփանք կը խնդրելի.. Եղեանագործք հանդիստ չունին.. Հայրենի տունէն հեռացայ.. մահիճս ձգեցի.. կը թափառէի մայրեաց մէջ.. հեղեղատնէ ըու եղերքը կը պառկէի.. զՅովսէփ կը խնդրէին աղաղակներս, բայց ձայնս անապատներու մէջ կը կորսուէր: Հղօրին վրէժխնդրութիւնը զես կը հալածէ.. Յանցաւոր եմ ես ու թշուառ..

ՅԱԿՈՒՅ. Սիմէոն:

ՍԻՄՈՆ. Զքեզ խանդաղատել չեմ ուզեր. կը ճանչնամ ոճիրս: Բարձրեալը չիներեց, իրեն պէս ահաւոր եղիր դու ալ. Էս յափշտակեցի սիրեցեալ որդիդ.. Էս մերկացուցի զինքը եր պատմուճանէն.. Էս վերջապէս.. ս'չ ես ծախեցի. իմ, քու, Աբրահամու արիւնը.. Պատժէ զես, անխճէ զես. անխճէ խաղառ Սիմէոնին սերունդն ալ..

ՅԱԿՈՒՅ. Աստուած սրտմտութեան.. Բայց ի՛նչ աղմուկ կը լսեմ:

ԲԵՆԻԱՄԻՆ. Եղբարքս են որ կը վերադառնան:
ՅԱԿՈՒՅ. Մասնիւք...

ՏԵՍԻԼ Զ

ՅԱԿՈՒՅ ԵՒ ՈՐԳԻԲԵՆ

ՌՈՒԲԵՆ. Մեր բարերարին առատաձեւն խնամքը կրնանք...

ՅԱԿՈՒՅ. Հեռացէք, հեռացէք ձեր հօրմէն:

ՌՈՒԲԵՆ. Ի՛նչ է մեր յանցանքը:

ՆԵՓԹԱՂԻՄ. Ի՛նչ ըրինք:

ՅԱԿՈՒՅ. Ո՛վ խտացեալ սիրտք. դո՛ւք մոռցաք և ինձի՛ կը հարցունէք...

ՌՈՒԲԵՆ. Ո՛վ Յակոբ...

ՅԱԿՈՒՅ. Ճակատիս վերայ չէք կարգար Ամենակալին վճիռը որ զձեզ կը դատապարտէ:

ՌՈՒԲԵՆ. Եղբարք իմ... Սիմէոն:
ՅԱԿՈՒՅ. Ի՛նչ ըրիք.. Ի՛նչ.. խղճի ձայնը չէք լսեր սրտեր. նուզ մէջ՝ որ Յովսէփ կը պոռայ:

ՌՈՒԲԵՆ. Կօրսուէցանք...

ԲԵՆԻԱՄԻՆ. (յոպս անխալ) Ներէ հայր իմ. ձեռնամած կը պաղատի քեզ Բենիամին...

ՅԱԿՈՒՅ. (չԲենիամին բնառելով). Զատուէ այս անօրէններէն ո՛վ Բենիամին.. Ի՛նչ գործ ունի անմեղութիւնը յանցանաց մէջ.. Եկո՛ւր որդեանկ իմ, Եկո՛ւր.. դու միայն արիւնս ես.. դու միայն՝ Իսրայէլի արիւնն ես.. հեռացիր եղբայրասպաններէդ որդեակ իմ..

ՆԵՓԹԱՂԻՄ. Իողգոջագին ծնագոյդ կը փարիմք հայր... ներէ մեզի:

ՅԱԿՈՒՅ. Ի՛նչպէս խանդաղատիմ ձեր արտասուացը.. եղբայրնիդ ալ կու՛ւր երբ զինքը ծախեցիք...

ՍԻՄՈՆ. Իմ վրաս թափէ միայն բարկութիւնդ.. Էս միայն յանցաւոր եմ:

ՏԵՍԻԼ Է

ՆՈՅՆՔ ԵՒ ՅՈՎՍԷՓ

ՆԵՓԹԱՂԻՄ. Օգնէ մեզի, հզօր իշխան, մեր հօրը ցատուճմ ողբէ՛ք...

ՍԻՄՈՆ. Ե՛ս եմ, Էս յանցաւորը...

ՅԱԿՈՒՅ. Փախէք, հեռացէք, Եթէ ո՛չ զամենքդ ալ կ'անի ծեմ:

ՅՈՎՍԷՓ. Կը պաղատիմ քեզի, Յակոբ, մի՛ անխճեր զաւակներդ...

ՅԱԿՈՒՅ. Երբոր ճանչնաս իրենց նենգութիւնը...

ՅՈՎՍԷՓ. Եթէ Աստուած 'ի գուժ կը շարժի զըջման արցունքներէ, մի թէ վրէժխնդրութեան ոգւով լցուած կրնայ Յակոբ որդիքը նշովէլ:

ՅԱԿՈՒՅ. Ո՛հ չես գիտեր Ի՛նչ կը խնդրես.. չես ճանչնար ասոնց ոճիրը...

ԲԵՆԻԱՄԻՆ. Յանցաւոր են, բայց որդիքդ են:

ՅԱԿՈՒՅ. Կրնո՞ս հաւատալ. թշուառք.. իրենց եղբայրը, իմ զաւակս, Յովսէփս ծախեցին...


ՌՈՒԲԻՆ. Յաւերնիս յանցանքներնէս աւելի է:
 ՆեփթԱՂԻԹ. Արնամբս կ'ուզէի դնել զինքը:
 ՌՈՒԲԻՆ. Աս երկրիս մէջն է անշուշտ... Ներեցէք որ...
 ՆեփթԱՂԻԹ. Թափառինք Եգիպտոսի մէջ... և երբոր զինքը
 գտնանք...
 ՌՈՒԲԻՆ. Աւջեւ 'ի ծունր կ'իջնանք...
 ՍԻՄՈՆ. Գլուխնիս փուռոյ մէջ կը թաթախենք...
 ՆեփթԱՂԻԹ. Կը փշրենք իր երկաթները...
 ՍԻՄՈՆ. Իր շղթաները ես կ'ուզեմ կրել:
 ՆեփթԱՂԻԹ. Ամենքնիս ալ գերի կ'ըլանք զինքը ազատելու
 համար (Եւէտա՛ վրայ կ'ըլան):
 ՅՈՎՍԷ֓. Որդիք Յակոբու կեցէք, սրտերնիդ զըջացեալ
 է. եղբայրնիդ կը բնտուէք. կ'ուզէք իր շղթաները կրել. լաւ
 ուրեմն պիտի գտնէք զինքը:
 ՍԻՄՈՆ. Ինչպիսի՛ յոյս կուտայք մեզի, Տէր:
 ՅԱՎՈՐ. Որդիս պիտի գտնամ...
 ՍԻՄՈՆ. Ո՛րջափ պիտի առէ զմեզ:
 ՅՈՎՍԷ֓. Դեռ զձեզ կը սիրէ...
 ՍԻՄՈՆ. Սոսկալով պիտի տեսնայ զմեզ:
 ՅՈՎՍԷ֓. Ձեզի ներեց արդէն:
 ՅԱՎՈՐ. Ո՛վ Տէր, նպաստէ եռանդեանս... առաջնորդէ
 դողդուռն քայլերուս. որդիս գտնամ:
 ՅՈՎՍԷ֓. Հանդարտէ պատկառելի ծերունի:
 ՅԱՎՈՐ. Ըսէ՛ ինձի, ըսէ՛ ի՛նչ եղաւ:
 ՅՈՎՍԷ֓. Փառաց ծայրն հասած է, և հիմայ մարդկանց
 երջանկադոյնն է:
 ՅԱՎՈՐ. Ալ գերի չէ՞ ուրեմն:
 ՅՈՎՍԷ֓. Թագաւորին սիրելին է. Ժողովուրդը կը խո-
 նարհի իրեն առջև:
 ՅԱՎՈՐ. Ո՛վ յուզումն... ի՛նչ այլայլութիւն. ո՛հ Տէր,
 զԹա՛ ինձի... որդիս, ո՛ւր է որդիս:
 ՅՈՎՍԷ֓. Հայր իմ, ոտքիդ առջևն է. ես եմ Յովսէփ...
 ԱՄԵՆՔԸ. ('ի Ժողով) Յովսէփ...
 ՅՈՎՍԷ֓. Այո՛. քու Յովսէփ որդիդ է որ հիմայ քեզմէ
 իր եղբարցը թողութիւնը կը խնդրէ:
 ԲՆՆԻԱՄԻՆ. Աստուած զթուլթեան:
 ՅՈՎՍԷ֓. (ԿԱՅԻՆ ԵՄԻ ԿԱՆԵՆԷՆ ԵՄԻ ԳՐԵՆԷՆԷ ԵՄԻ) Ո՛տք ելէք,

եղբարք իմ, Յակոբ կը ներէ ձեզի... Հայր իմ, որդուդդ մէջ
 ապրէ. Փարսուն իմանալով իմ բարեբաստիկ վիճակս և թըշ-
 նամեացս նենգութիւնը, Գեսեմայ երկիրը ձեզի կը շնորհէ.
 Հոն միասուսմ Իսրայելի որդիքը պիտի կարենան իրենց հար-
 ցը Աստուածը պաշտել:
 ՅԱՎՈՐ. Աստուած զթուլթեան, վերջապէս որդիս կը
 շնորհէս ինձի...
 ԲՆՆԻԱՄԻՆ. Գրեմ գբեզ, եղբայր իմ:
 ՍԻՄՈՆ. Ա՛լ ցաւերս գաղբեցան... անցան տաքնասններս:
 ՅՈՎՍԷ֓. Ո՛վ հայր իմ, ինչո՞ւ չես կրնար տեսնել քու
 որդիդ, որ զբեզ երջանկացնելու յուսով միայն կը սփոփուէր:
 ՅԱՎՈՐ. ('ի Ժողով) Աստուած իմ, դու որ իմ զաւակս
 շնորհեցիր ինձի. դու որ իմ ցաւերս այս վայրկենիս մէջ փա-
 րատելով երջանիկ հայր կ'ընես զիս... ո՛հ, ա՛ռւր ինձ, հարցս
 քով յաւիտեան հանգչելէն առաջ՝ անգամ մ'ալ որդուդ
 դէմքը տեսնեմ: (արփառանալի ելբարս) Բայց ո՛հ. ի՛նչ անորժ-
 զպացմունք մը կ'իմանամ... մթութիւնը կը փարատի... լոյս.
 լոյս... ո՛հ. քաղցր վայրկեան. ո՛հ վերջապէս զձեզ կը տեսնեմ
 աղաքս...
 ՌՐԴԻԲՆ. (ԿՅՈՒԲ ԳՐԵՆԷՆԷ) Ո՛վ հայր մեր:
 ՅՈՎՍԷ֓. Թող առաքինութիւնն ու յոյսը զմեզ դար-
 ձեալ միացնէ:
 ՅԱՎՈՐ. Եկուր զերկս, որդեակ իմ Յովսէփ. ա՛ռ քեզի
 իմ համբոյրս, առէք դուք ալ իմ օրհնութիւնս, որդիք Իսրա-
 յելի՛ այս քաղցր միեթարուլութիւնը որ կը զբամ, կ'ապահովը-
 նէ զիս որ Աստուծոյ խոտամանցը լրանալու ժամանակը մօ-
 տեցաւ... մօտեցաւ այն ժամանակը յորում Իսրայել պիտի
 տիրէ բոլոր աշխարհիս՝ թշուառ մարդկութիւնը երջանկա-
 ցընելու համար:

29-ի ՎԱՐԱԳՈՅՐՆ

ԳՆԲ





ՀՀ Ազգային գրադարան



NL0335749

